ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Լրացավ գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր Սրբուհի Լիսիցյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 60-ամյակը։ Նրա անունը կապվում է հայագիտության մի նոր ուղղության՝ պարարվեստագիտության հիմնադրման հետ։

Ընակվելով Թբիլիսիում, Սրբուհի Լիսիցյանը տակավին 1917 թ. հիմնադրել է ասմունքի, ռիթմի և պլաստիկայի ստուդիա, որն հետագայում վերածվեց ինստիտուտի։ Երիտասարդ արվեստագետը ղեկավարում էր ոչ միայն ինստիտուտի գեղարվեստական բաժինը, այլև բեմադրում էր ռուսական ու արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ, ծրագրի մեջ մտցնելով նաև մի շարք ասիական (կամ կովկասյան) պարեր։

1924 թ. Սրբուհի Լիսիցյանը սկսում է ժողովրդական պարերի գրանցումը։ Լինելով Հայաստանի լուսժողկոմատին կից նյութական մշակույթի ու պատմության ինստիտուտի աշխատակից, նա, սկսած 1932 թ., մասնակցում է ազգագրական գիտարշավներին և գրանցում հայ ժողովրդի պարային ու թատերական ժառանգության ուշագրավ նմուշներ։ Սակայն, հասկանալով որ գրանցման նկարագրողական մեթոդը շարժումն ամբողջությամբ ու ճշտությամբ չի պահպանում, Լիսիցյանն ուսումնասիրում է այն արձանագրելու բոլոր հնարավորությունները, օգտագործում նախորդների փորձը և ստեղծում է նոր սիստեմ՝ «շարժման գրանցում»։ Լիսիցյանի շարժման գրանցման սիստեմն ունի 32 նշան և տարածության մեջ գտնվող մարդու բոլոր շարժումները գրանցում է մաթեմատիկական ճշտությամբ։ Պատահական չէ, որ այժմ շատ մասնագետներ (այդ թվում և արտասահմանյան) ուսումնասիրում են նրա մեթոդներն ու գրանցման սիստեմը։ Սրբուհի Լիսիցյանը թափանցել է ինչպես պարարվեստի և թատերագիտության, այնպես էլ շարժումը արձանագրելու պրոբլեմների էության մեջ և լուծել է դրանք։

Հայ հոգևոր մշակույթի զարդացման գործում արվեստագետի մյուս խոշոր ծառայությունը դարերի ու հազարամյակների ընթացքում ստեղծված ու մեզ փոխանցված հայկական ժողովրդական պարերի հավաքումն է։ Նրա շնորհիվ հիմք դրվեց մի արխիվի, որը բաղկացած է մոտ 2000 պարային ու թատերական նմուշներից։ Այդ նյութերի մի մասը հրատարակվել է «Հայ ժողովրդի հինավուրց պարերն ու թատերական գործողությունները» մենագրության առաջին (1958) ու երկրորդ (1972) հատորներում։ Այս ուսումնասիրության արժեքը ոչ միայն պարերի, նրանց պարեղանակների ու տեքստերի հրատարակման մեջ է, այլև դրանց ժանրերի, առանձին խմբերի, ձևերի ու նրանց դասակարգման մեջ։ Վերլուծելով հայ պարային ֆոլկլորը, Լիսիցյանը բացատրել է պարերի ժանրային հատկանիշներն ու նրանց հնագույն ժամանակներից եկող էությունը, նշանակությունն ու բովանդակությունը։ Դրանք ռազմական, ճանապարհի, սգո ու թաղման, վիպական, կախարդական, տոտեմական և այլ պարեր են։

Սրբուհի Լիսիցյանը արվեստի, ժողովրդական պարի և թատրոնի ճանաչված գիտակ է, բանաստեղծ, երաժշտագետ, պատմաբան ու ազգագրագետ։

ԷՄՄԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու